ՄԵՐ ՀՈԲԵԼՅԱՐՆԵՐԸ • НАШИ ЮБИЛЯРЫ

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Գ. Ա. ԲՐՈՒՏՅԱՆ
(Ծննդյան 60-ամյակի առթիվ)

Լրացավ սովետական անվանի գիտնական, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Գեորգ Աբելի Բրուտյանի ծննդյան 60-ամյակը:

Գ. Ա. Բրուտյանը ծնվել է 1926 թ. ՀՍՍՀ Իջևանի Սևքար գյուղում: Ուսման նկատմամբ ունեցած մեծ սերը հանգեցնում է այն բանին, որ նա զուգահեռաբար սովորում է երկու՝ իրենց բնույթով միանգամայն տարբեր բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտում և Երևանի համալսարանում, երկու բուհերն էլ ավարտելով բարձր գնահատականներով: 1951 թ. նա հաջողությամբ ավարտում է Մոսկվայի պետական համալսարանի ասպիրանտուրան՝ պաշտպանելով դիսերտացիան և ստանալով փիլիսոփայական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 1962 թ. Գ. Բրուտյանը հաջողությամբ պաշտպանում է դոկտորական դիսերտացիան՝ դառնալով փիլիսոփայական գիտությունների երիտասարդ դոկտորներից մեկը Սովետական Միությունում: Այդ թվականից նա գլխավորում է Երևանի Վ. Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների պետական մանկավարժական ինստիտուտի փիլիսոփայության, իսկ 1971 թ.՝ Երևանի պետական համալսարանի դիալեկտիկական մատերիալիզմի և տրամաբանության ամբիոնները: Գիտության բնագավառում ունեցած ծառայակշիռ նվաճումների համար 1971 թ. Գ. Բրուտյանը ընտրվում է ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ, իսկ 1982 թ.՝ ակադեմիկոս:

Լայն են Գ. Բրուտյանի գիտական հետաքրքրությունները: Նրա գրչին են պատկանում առանձին նշանավոր գիտական հետազոտությունները Սովետական Հայաստանում ավանդական ձևական տրամաբանության, մաթեմատիկական տրամաբանության, լեզվի փիլիսոփայության, իմացաբանության, բարգմանչական արվեստի տրամաբանական հիմունքների, ժամանակակից արևմտամանյան փիլիսոփայական ուղղությունների քննական վերլուծության և այլ փիլիսոփայական ու հարակից պրոբլեմների վերաբերյալ: Դրան. անշուշտ, նպաստում է այն հանգամանքը, որ Գ. Բրուտյանն ունի ինչպես բնագիտական, այնպես էլ հումանիտար կրթություն. հարկ է նշել նաև մի շարք լեզուների լավ իմացությունը:

Գ. Բրուտյանը ավելի քան 170 հրատարակված գիտական աշխատությունների, այդ թվում 45 գրքի և գրքույկի հեղինակ է: Նրա աշխատությունները հրատարակվել են ինչպես ՍՍՀՄ-ում (Երևան, Մոսկվա, Կիև, Մինսկ, Վիլնյուս, Տաշքենդ և այլն), այնպես էլ ԱՄՆ-ում, Անգլիայում, Բուլղարիայում, ԳԴՀ-ում, Իտալիայում, Լեհաստանում, Կանադայում, Հունգարիայում, Չեխոսլովակիայում, Ֆրանսիայում և այլ երկրներում, աշխարհի մոտ 20 լեզուներով:

Այստեղ հիշատակման են արժանի Գ. Բրուտյանի հեղինակած այնպիսի հիմնարար աշխատություններ, ինչպիսիք են «Իմացության պրոցեսի դիալեկտիկան», «Ընդհանուր սեմանտիկայի իմացության տեսությունը», «Սեմանտիկյան փիլիսոփայության քննական վերլուծություն», «Լեզուն և փիլիսոփայությունը», «Մաթեմատիկական տրամաբանության փիլիսոփայական ներածություն», «Սեպիր-Ուորֆի հիպոթեզը», «Փիլիսոփայություն և լեզու», «Իմաստասիրական երկխոսություններ» (երկու հատորով), «Փիլիսոփայական գիտելիքի վերլուծության ակնարկներ», «Փիլիսոփայական գիտելիք», «Փոխակերպական տրամաբանություն», «Փաստարկում» մենագրությունները և այլն:

Իր աշխատություններում Գ. Բրուտյանը առաջադրել է մի շարք կարևոր կոնցեպցիաներ ու հետազոտական ուղղություններ: Նա առաջադրել է աշխարհի լեզվական և կոնցեպտուալ մոդելների, բազմաարամաբանության կոնցեպցիաները, լեզվաբանական լրացուցչության սկզբունքը, որը փիլիսոփայական և լեզվաբանական գրականության մեջ նշվում է որպես «Բրուտյանի լեզվաբանական լրացուցչության սկզբունք», տրամաբանության մեջ հիմնադրել է «փոխակերպական տրամաբանություն» նոր հետազոտական ուղղությունը, մշակել է փաստարկման դիալեկ-

տիկամատերիալիստական տեսությունը: Ի դեպ, վերջինիս մասին. Գ. Բրուտյանի ջանքերի շնորհիվ 1984 թ. նոյեմբերին Երևանում տեղի ունեցավ փաստարկման փիլիսոփայական պրոբլեմներին նվիրված գիտական կոնֆերանս, որին մասնակցում էին մեր երկրի տարբեր գիտական կենտրոններից հրավիրված ավելի քան 120 գիտնականներ: Դիտաժողովը բարձր գնահատեց Գ. Բրուտյանի գիտական հետազոտությունների արդյունքները: Մեր բոլորի հիշողության մեջ դեռ շատ թարմ է այն միջազգային համաժողովը, որը նվիրված էր հայ մեծ փիլիսոփա Դավիթ Անհաղթի ծննդյան 1500-ամյակին: Հոբելյանական միջոցառումների կազմակերպման գործում խոշոր դեր խաղաց Գ. Բրուտյանը: Նա ոչ միայն հիանալի ձևով կազմակերպեց հայ փիլիսոփայի հոբելյանը և հոբելյանական գիտական կոնֆերանսը, այլև հոբելյանին նախորդող մի քանի տարիների ընթացքում ուսումնասիրեց Դավիթ Անհաղթի երկասիրությունները և հրապարակի վրա դրեց «Դավիթ Անհաղթի ուսմունքը տրամաբանության մասին» մենագրությունը, որը նոր խոսք էր հայ փիլիսոփայական մտքի պատմության մեջ: Դ. Բրուտյանը մասնագիտորեն վերլուծեց Դավիթ Անհաղթի ուսմունքը տրամաբանության մասին՝ ցույց տալով նրա տեղն ու դերը տրամաբանական ուսմունքների պատմության մեջ:

Գ. Բրուտյանի աշխատությունները մեծ արձագանք են գտել ինչպես մեր երկրում, այնպես էլ արտասահմանում: Բարձր գնահատականներով գրախոսականներ են հրատարակվել կենտրոնական «Коммунист», «Вопросы философии», «Философские науки», սոցիալիստական երկրների ամսագրերում և թերթերում, նրա հետ բանավեճ են վարում արևմտյան երկրների փիլիսոփայական որոշ ամսագրեր: Նրա մի շարք աշխատություններ հանախ որպես դասագիրք են օգտագործվում աշխարհի մի շարք առաջատար համալսարաններում: Գ. Բրուտյանը հայերեն լեզվով տրամաբանության առաջին դասագրքի հեղինակն է, մի դասագիրք, որն ունեցել է չորս հրատարակություն: Այն բարձր գնահատականի է արժանացել և օրինակելի դասագիրք համարվել բազմաթիվ գրախոսողների կողմից, որոնք իրենց դրվատանքի խոսքն են ուղղել հեղինակի հասցեին ինչպես հանրապետական, այնպես էլ կենտրոնական գիտական հանդեսներում և թերթերում: Նրա այլ աշխատությունները համամիութենական ծրագրերում առաջադրված են ուսանողության համար որպես ուսումնական գրականություն: Մոսկվայի պետական համալսարանի հրավերով Գ. Բրուտյանը մի քանի անգամ հատուկ դասընթացներ է կարդացել այդ համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետում:

Գ. Բրուտյանը ակտիվորեն մասնակցում է միջազգային փիլիսոփայական կյանքին: Նա դասախոսություններով հանդես է եկել Բրիջպորդի (ԱՄՆ), Օքսֆորդի, Քեմբրիջի (Անգլիա), Սոֆիայի (Բուլղարիա), Բելգրադի (Հարավսլավիա), Տոկիոյի (Ճապոնիա), Հելսինկիի (Ֆինլանդիա) և աշխարհի այլ հանրահանաչ համալսարաններում: Մասնակցել է Փարիզում և Բեռլինում կայացած հեգելյան միջազգային համաժողովներին և սովետական այն փիլիսոփաներից է, որ ներկայացել է համաշխարհային փիլիսոփայական 12-րդ (Իտալիա), 13-րդ (Մեքսիկա), 14-րդ (Ավստրիա), 15-րդ (Բուլղարիա), 16-րդ (ԳՖՀ) և 17-րդ (Կանադա) համաժողովներին: Բայց նա սոսկ մասնակից չի եղել. բոլոր համաժողովներում հանդես է եկել գիտական զեկուցումներով, իսկ 15-րդ և 16-րդ համաժողովներում ղեկավարել որոշ մասնաճյուղերի աշխատանքները: Գ. Ա. Բրուտյանի անունը լավ հայտնի է միջազգային փիլիսոփայական շրջաններում: Այս առումով պատահական չէ, որ նրա աշխատությունները հրատարակվում են արտասահմանյան հեղինակավոր հրատարակչությունների կողմից:

Դ. Բրուտյանի՝ որպես գիտնականի հեղինակության մասին է խոսում նաև այն փաստը, որ նա նշել է Պենսիլվանիայի համալսարանի (ԱՄՆ) "Philosophy and Rhetoric" միջազգային ամսագրի խմբագրական կոլեգիայի անդամ: 1985 թ. Գ. Ա. Բրուտյանն ընտրվել է Բուլգարիայում նույն թվականին հիմնադրված «Փաստարկում և հռետորություն» միջազգային ստեղ-

Ստեղծագործական կոլեկտիվի գիտական ղեկավար: Խոսուն փաստեր են նաև նրան Մեծ Մաստերտոնի (Նոր Զելանդիա) պատվավոր քաղաքացու կոչման շնորհումը, Կոմենսկու անվան (ՉՍՍՀ) և «Պատոլո նշան» առաջին աստիճանի (ՉՍՍՀ) մեդալներով պարգևատրելը և այլն:

Գ. Բրուտյանը զգալի աշխատանք է կատարում նաև սփյուռքահայության և Սովետական Հայաստանի մշակութային կապերի ամրապնդման ուղղությամբ: Տուրքանչյուր արտասահմանյան գիտական գործուղման ընթացքում նա լինում է սփյուռքահայերի շրջանում, ծանոթանում նրանց կյանքին, նրանց համար զեկուցումներ կարդում Սովետական Հայաստանի գիտության նվաճումների վերաբերյալ: Գ. Բրուտյանը ղեկավարում է Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի հայագիտության մասնաճյուղը:

Սրա մեկ տասնամյակ է, ինչ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Բրուտյանը ղեկավարում է մեր հանրապետության հասարակական գիտությունների մի շատ կարևոր բնագավառ, որն իր մեջ ներառում է փիլիսոփայությունը, հոգեբանությունը, իրավագիտությունը, լեզվաբանությունը, գրականագիտությունը և արվեստաբանությունը: 1977 թ. նա ՀՍՍՀ ԳԱ նախագահության անդամ է, նույն թվականից՝ ՀՍՍՀ ԳԱ փիլիսոփայության և բանասիրության բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարը: Բազմիցս է ընդգծվել այդ պաշտոններում նրա գիտակազմակերպչական աշխատանքների բարձր որակը:

Զգալի ներդրում ունի ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Ա. Բրուտյանը Երևանի պետական համալսարանի փիլիսոփայության և սոցիոլոգիայի ֆակուլտետի ստեղծման գործում:

Մեծ է Բրուտյանի դերը նաև գիտամանկավարժական կադրերի պատրաստման ասպարեզում: Նա կրթել ու դաստիարակել է բազմաթիվ երիտասարդ մասնագետներ, որոնցից շատերն այսօր գիտության դոկտորներ ու թեկնածուներ են և հաջողությամբ աշխատում են Երևանի, Մոսկվայի և միութենական այլ առաջատար գիտական կենտրոններում:

Գ. Բրուտյանը իր գիտակազմակերպչական և գիտական աշխատանքները ակտիվորեն զուգորդում է հասարակական աշխատանքների հետ: Շատերին է զարմանք պատճառում, թե ինչպե՞ս կարելի է նման բեղմնավոր գիտական գործունեության և ծանրաբեռնվածության պայմաններում զբաղվել նաև հասարակական աշխատանքներով: Սակայն մեզ՝ Գ. Բրուտյանին մոտիկից ճանաչողներիս, նրա մեծ հանդի ակնատեսներիս համար դա այնքան էլ զարմանալի չի թվում:

1971 թ. Գ. Ա. Բրուտյանի ջանքերով Երևանի պետական համալսարանում հիմնադրվեց դիալեկտիկական մատերիալիզմի և տրամաբանության ամբիոնը, որի վարիչն է եղել նա մինչև 1976 թ. (1977-ից՝ համատեղությամբ), իսկ այժմ էլ այդ ամբիոնի գիտական ղեկավարն է: Նա ՍՍՀՄ փիլիսոփայական ընկերության հայկական բաժանմունքի նախագահն է, ՍՍՀՄ փիլիսոփայական ընկերության հայկական բաժանմունքի «Տարեգրքի» հիմնադիրն ու գլխավոր խմբագիրը, Երևանի պետական համալսարանին առընթեր փիլիսոփայական մասնագիտությունների գծով դիսերտացիաների պաշտպանության խորհրդի, ՀՍՍՀ ԳԱ փիլիսոփայության և բանասիրության բաժանմունքին առընթեր Դավիթ Անհաղթի տեսական ժառանգության և միջնադարյան Հայաստանի փիլիսոփայության գիտական խորհրդի, Սովետա-իսպանական բարեկամության ընկերության հայկական բաժանմունքի վարչության նախագահը և այլն: Նա ՍՍՀՄ ԳԱ նախագահությանը և ՍՍՀՄ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության մինիստրությանը կից մի շարք խորհուրդների և հանձնաժողովների, ՍՍՀՄ փիլիսոփայական ընկերության վարչության նախագահության, ՍՍՀՄ փիլիսոփայական ընկերության «Տարեգրքի» և կենտրոնական *«Философские науки»* ամսագրի խմբագրական կոլեգիաների, ինչպես նաև ՀՍՍՀ ԳԱ համակարգի մի շարք խորհուրդների անդամ է և իր ակտիվ մասնակցությունն է բերում այդ կազմակերպությունների աշխատանքներում:

Իր գիտական, գիտակազմակերպչական և հասարակական աշխատանքների և ծննդյան 60-ամյակի առթիվ Գ. Ա. Բրուտյանը վերջերս պարգևատրվեց Ժողովուրդների բարեկամության շքանշանով:

Գ. Բրուտյանը լի է ստեղծագործական նոր մտահղացումներով: Ցանկանք նրան քաջառողջություն և արևշատություն այդ մտահղացումների իրականացման հանապարհին, որպեսզի նա դեռ երկար տարիներ կարողանա հարստացնել փիլիսոփայական գիտությունը նոր գործերով և գաղափարներով:

ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Ս. Ս. ԱՐԵՎՇԱՏՅԱՆ,
Փիլիսոփայական գիտությունների դոկտոր
Հ. Գ. ՇԱՔԱՐՅԱՆ